ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

14 ՀՈՒԼԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էին՝ Սոնա Ադամյանը, Արարատ Թումանյանը, Արտուշ Մաթևոսյանը, Մարյամ Միքաելյանը, Վերոնիկա Միքայելյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
«Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն Նաիրի Զաքարյանը, Ագարակի վարչական ղեկավար Արմեն Անտոնյանը, Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Բագրատ Զաքարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Աննա Նավասարդյանը

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 14-ի N8 արտահերթ նիստի օրակարգը՝

1)Մեղրի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2023 թվականի ծրագիրը հաստատելու մասին

2)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին

3)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 24-ի N14-Նորոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

4)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 1-ի N59-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

5)Մեղրի համայնքի հողային հաշվեկշռին և ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգմանը համաձայնություն տալու մասին

6)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու թվով 4 խմբակցությունների գործունեության ապահովման նպատակով գործավարների հաստիքային միավորները և աշխատավարձերը սահմանելու մասին

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 71-Ա/

ԼՍԵՑ - ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հաստատել Մեղրի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2023 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Ծրագրի ֆինանսավորման համար առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում հատկացումներ նախատեսելու հարցը քննարկման առարկա դարձնելու նպատակով նշված ծրագիրը առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերի ներկայացման համար ՀՀ տարածքային կառավարման մարմնի միջոցով ներկայացնել ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 72-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի կողմից տրված հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-8 Դեմ-1 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /Որոշում N 73-Ա/

ԼՍԵՑ - *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 14-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 24-ի «Մեղրի համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 14-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն N1, N2, N3 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-1 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /Որոշում N 74-Ա/

ԼՍԵՑ - *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 59 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 01-ի «Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական եվ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով, մրցույթների կազմակերպման համար մրցույթային հանձնաժողով ստեղծելու մասին» N 59 որոշման հավելվածում կատարել փոփոխություն՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 75-Ա/

ԼՍԵՑ - ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ԵՎ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի կողմից կազմված Մեղրի համայնքի հողային հաշվեկշռին և համայնքի ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգմանը՝ համաձայն N1, N2 հավելվածների:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 76-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹՎՈՎ 4 ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՐԾԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու թվով 4 խմբակցություններից յուրաքանչյուրի համար նախատեսել 1 /մեկ/ գործավարի հաստիք:

2.Գործավարի համար սահմանել ամսական 91300 /իննսունմեկ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ աշխատավարձ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-7 Դեմ-1 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է /Որոշում N 77-Ա/

Ավագանու անդամներ

ԱՆԱՀԻՏ ԱՂԱՄԱԼՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՄԱՐՈՒՍՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՇԱՀԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ

ՆԱՐԵԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ԶԱՔԱՐՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ա. Նավասարդյանը